Կարգապահական գործ թիվ ԿԳ-14131

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի մարտի 25-ի թիվ 58-րդԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/41-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՄԼԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ), նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Կարեն Մեժլումյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Ալեքսանդր Սիրունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Համլետ Տերտերյանին (արտոնագիր 1109) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

<u>1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 27.10.2014թ. տրամադրված տեղեկանքի Համլետ Տերտերյանն ունի 35.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. մարտից մինչև 2014թ. սեպտեմբեր (ներառյալ) ամիսների համար:

<u>2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը և գործի հանձնումը Խորհրդին.</u>

27.10.2014թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 361-Ա/ԿԳ-14131 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Համլետ Տերտերյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

27.11.2014թ.-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի մարտի 25-ին, ժամը՝ 18.45-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. Պատասխանողի բացատրությունները.

Փաստաբան Համլետ Տերտերյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին անհայտ պատճառներով չէր ներկայացել, և որևէ բացատրություն չի ներկայացվել պատասխանողի կողմից:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Համլետ Տերտերյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 16.10.2010թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 25.03.2015թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Համլետ Տերտերյանն ունի 35.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. մարտից մինչև 2014թ. սեպտեմբեր (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 27.10.2014թ. և 16.01.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքներով),

3) փաստաբան Համլետ Տերտերյանն իր անդամավճարի պարտքը մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 25.03.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով):

5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 25.03.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Համլետ Տերտերյանի (արտոնագիր 1109, ստացված՝ 16.10.2010թ.) նկատմամբ 2010-2015թթ. ընկած ժամանակահատվածում 3 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ և առկա է 1 ընթացիկ վարույթ անդամավճարի պարտք ունենալու մասով.

- 30.11.2011թ. Խորհրդի թիվ 27/7 որոշմամբ կարճվել է հարուցված կարգապահական վարույթը արտոնություն կիրառվելու հիմքով,
- 29.10.2012թ. Խորհրդի թիվ 18-ԿԳ որոշմամբ կարճվել է հարուցված կարգապահական վարույթը արտոնություն կիրառվելու հիմքով,
- 13.06.2014թ. Խորհրդի թիվ 114ԿԳ/1 Համլետ Տերտերյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով(տույժը մարվել է),
- 17.02.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 17.02.2015թ. որոշմամբ հարուցվել է թիվ 41-Ա/ԿԳ-15011 կարգապահական վարույթը՝ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով:

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Համլետ Տերտերյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Համաձայն Կարգի 17-րդ կետի՝ «Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: Փաստաբանի կողմից անդամավճար չվճարելու հիմքով հարուցված երկրորդ կամ հետագա ցանկացած կարգապահական վարույթ չի կարող կարճվել հարուցելուց հետո պարտքի մարման հիմքով: ...»: Նշված Կարգը հաստատվել է 26.12.2013թ.-ին, ուստի 16-րդ և 17-րդ կետերում նշված ժամկետները պետք է հաշվարկել այդ ժամանակահատվածից սկսած:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Համլետ Տերտերյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի 27.10.2014թ., 16.01.2015թ. և 25.03.2015թ.-ի տեղեկանքներով:

Միաժամանակ, Խորհուրդն արձանագրում է, որ Համլետ Տերտերյանը ևս մեկ անգամ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության անդամավճար չվճարելու համար, սակայն այն ևս չի նպաստել նրան, որ Համլետ Տերտերյանը փոխի իր վարքագիծը և չխախտի ՀՀ օրենսդրության, ինչպես նաև Պալատի ներքին իրավական ակտերի պահանջները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Համլետ Տերտերյանին (արտոնագիր 1109) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և

«Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:
2. Փաստաբան Համլետ Տերտերյանին (արտոնագիր 1109) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:
3. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Համլետ Տերտերյանին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

Նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան